

28.07.14

Ինչպես հայտնի է, ԼՂՀ կառավարությունը ս. թ. հունիսի 6-ին հավանություն է տվել ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակված ու գործադիրին ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգիրք՝ ԼՂՀ օրենքի նախագծին՝ այն ուղարկելով Ազգային ժողովի քննարկմանը:

Օրինագիծը դրվել էր նաև հանրային քննարկման՝ ԿՀՀ համացանցային կայքում տեղադրելու, ինչպես նաև այդ մասին լրատվամիջոցներով հայտարարություններ հրապարակելու միջոցով: Օրենքի ընդունման դեպքում այն կիրառության մեջ կլինի 2015 թվականի հունվարի 1-ից:

Որքանո՞վ է անհրաժեշտ Արցախում նոր ընտրական օրենսգիրք ունենալը: Որո՞նք են օրինագծի հիմքում դրված խնդիրները:

Այս և նման մի շարք հարցերի պարզաբանումներ տվեց ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ:

-Սրբուհի Գրիգորիի, օրենսդիրների դատին է ներկայացվել ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքի նախագիծը: Կա՞ր, արդյոք, նախագծի ընդունման անհրաժեշտություն:

- Արցախի Հանրապետությունում գործում է 2004 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված ԼՂՀ ընտրական օրենսգիրքը, որում 5 անգամ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել: Ընտրական օրենսգրքով կարգավորվում են պետական իշխանության բոլոր մակարդակների ընտրությունները: Այն իրավական հիմք է ծառայել չորս համապետական ընտրությունների համար և ներկայումս կիրառվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընթացիկ ընտրությունների կազմակերպման ու անցկացման ժամանակ:

Չնայած ընդհանուր առմամբ գործող ընտրական օրենսգիրքը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին և տարբեր ընտրությունների կազմակերպման համար լուծումներ է տալիս անհրաժեշտ գրեթե բոլոր ընթացակարգային ու ժամկետային հարցերին, այդուհանդերձ, այն գերծ չէ նաև թերություններից:

Անհրաժեշտ համարեցինք առավել կատարելագործված օրենսդրական դաշտ ապահովել շուրջ 100 000 ընտրողների ընտրական իրավունքի լիարժեք իրականացման համար, միևնույն ժամանակ առավել հստակ ու մատչելի աշխատանքային պայմաններ ստեղծելով 2500-ից ավելի ընտրական հանձնաժողովականների համար:

Օրինագծի հիմքում դրվել են ԼՂՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի, ինչպես նաև ԼՂՀ ընտրական գործընթացին հետևելու նպատակով Արցախ այցելած անկախ միջազգային դիտորդների կարծիքների հիման վրա առաջարկված բարելավումները, ՀՀ և ԼՂՀ ընտրական հանձնաժողովականների առաջարկությունները:

- Որո՞նք են այն հարցերը, որ պիտի կարգավորվեն նոր օրինագծի ընդունմամբ:

- Օրինագծում ամրագրումներ կամ լուծումներ են տրվում հետևյալ հիմնական հարցերին. նախ՝ շուրջ 200 ժամկետային տվյալներ են վերանայվում՝ հիմնականում կրճատվելու ձևով, ինչը, սակայն, ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների իրականացման սահմանափակումների չի հանգեցնի և խոչընդոտներ չի ստեղծի: Ընտրությունների նշանակման սկզբնաժամկետի գրեթե մեկ ամսով կրճատումը կնպաստի ընտրական գործընթացով պայմանավորված հասարակության մեջ օբյեկտիվորեն ստեղծվող հուզական դաշտի մեղմմանը:

Բացի այդ, ՏԻՄ ընտրությունների ժամանակ, ընտրությունները նշանակվելուց հետո, համայնքի ընտրողների ցուցակներում ընդգրկվելու սահմանափակումներ են ամրագրվում, միաժամանակ նախատեսվում նաև բացառությունները: Նպատակն ընտրագանգվածի հնարավոր արհեստական աճի կանխարգելումն է:

Գործող օրենսգրքում առկա՝ ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար ընտրությունն անցկացվող համայնքում ընտրողի առնվազն մեկ տարվա հաշվառում ունենալու պահանջը հստակեցվում է՝ վերջին՝ մեկ տարվա մասին դրույթի ավելացմամբ:

- Նոր օրինագծում ի՞նչ սահմանումներ կան ընտրագրավի առումով: Գործող օրենսգրքի համաձայն՝ նախընտրական հիմնադրամի համալրման աղբյուր էին հանդիսանում իրավաբանական անձանց կողմից կատարվող մուծումները: Փոփոխություններ կլինե՞ն ընտրական հանձնաժողովների ֆինանսավորմանը վերաբերող դրույթում:

- Նոր օրինագծով նախատեսվում է ընտրագրավի վերադարձման դեպքերի՝ բոլոր ընտրությունների համար միատեսակ կիրառում (նախագծում չի ներառվել նախընտրական հիմնադրամի հաշվին ընտրագրավ վճարելու հնարավորություն նախատեսող՝ գործող օրենքի դրույթը): Որպես նախընտրական հիմնադրամի համալրման աղբյուր՝ իրավաբանական անձանց կողմից կատարվող մուծումների մասին գործող օրենսգրքում առկա դրույթը նախագծում չի նախատեսվել: Փոխարենն այդպիսիք կատարելու հնարավորություն է ամրագրվել ընտրական իրավունք ունեցող անձանց համար:

Սահմանվում են նախընտրական հիմնադրամների միջոցների ծախսման հիմնական ուղղությունները, միաժամանակ միասնական մոտեցում է ամրագրվում դրանց մնացորդային գումարների օգտագործման համար, առավել հստակեցվում այդ միջոցների ծախսման մասին հայտարարագրեր ներկայացնելու ժամկետը, ձևը:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների կողմից վճարվող ընտրագրավի չափերի տարբերակման մեթոդ է ներառվում՝ կապված համայնքի ընտրողների թվակազմի հետ:

Ինչ վերաբերում է ընտրական հանձնաժողովների ֆինանսավորմանը, այո, վերանայվում և 40-45 տոկոսով բարձրացվում են ընտրական հանձնաժողովականների վարձատրության (փոխհատուցման) չափերը, ամրագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովականների դրամական փոխհատուցման տարբերակված մոտեցում՝ պայմանավորված տեղամասերում ընտրողների թվով :

Հավելեմ, որ ԿԸՀ արտաբյուջետային միջոցների մնացորդ 85 տոկոսը ևս կուղղորդվի

ընտրական վարչարարության բարելավման նպատակներին (հանձնաժողովների տեխնիկական վերազինում, ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստում և հրատարակում):

- Նախընտրական քարոզչության, ընտրական շտաբների կազմավորման կապակցությամբ և՞ առկա են փոփոխություններ:

- Ասեմ, որ քարոզչական նյութերի տարածման արգելք է նախատեսվում նաև ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողների, քրեակատարողական հիմնարկներում ծառայողների համար՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Ամրագրվում են դրույթներ ընտրական շտաբների կազմավորման, ընդ որում՝ դրանց տեղակայման վայրերի սահմանափակման մասին:

Փոփոխություններ են նախատեսվում նաև բողոքարկման առումով: Ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների բողոքարկման իրավունքի, մեխանիզմների, ասյանների լայն շրջանակ է սահմանվում. ընտրությունների արդյունքների մինչդատական բողոքարկման համար նախատեսված ժամկետը երկարաձգվում է ևս 4 ժամով:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր դիտորդ, վստահված անձ կամ զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցիչ լայն իրավասություն կունենա ընտրատեղամասերում վերահսկողություն, ստուգում իրականացնելու համար, ամրագրվում է վերահաշվարկի դիմումի ինստիտուտ: Նախագիծը դիմումների, բողոքների առկայության դեպքում վերահաշվարկի մեծ հնարավորություն է տալիս:

- Ընտրությունների կազմակերպվածության մակարդակի բարձրացման առումով ի՞նչ դրույթներ են նախատեսվում:

- Ամրագրվում է համապետական ընտրությունների դեպքում թեկնածուների կողմից նախընտրական ծրագրերի ներկայացման (ոչ պարտադիրության սկզբունքով), այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով հնարավորությունը, դրանց հրապարակումը կայքի միջոցով:

Թեկնածուի կողմից իր գույքի և եկամուտների մասին ինֆորմացիան (հայտարարագիրը) համապատասխան ընտրական հանձնաժողովին կարող է տրամադրվել գրանցվելուց հետո՝ 5 օրվա ընթացքում, և այն կտեղադրվի կայքում:

Նախատեսվում են քվեարկության արդյունքների աղյուսակավորում և դրանց տեղադրում կայքում:

Փոփոխություններ են նախատեսվում զանգվածային լրատվամիջոցների համար: Հստակ սահմանվում է, որ ամբողջ ընտրական գործընթացը կարելի է լուսանկարել և տեսանկարել՝ չխոչընդոտելով հանձնաժողովի աշխատանքներին: Չի կարելի նկարել միայն ընտրողների ստորագրվող ցուցակը՝ հաշվի առնելով, որ դա խախտում է ընտրության գաղտնիությունը:

Թեկնածուներին անվճար տրամադրվելիք դահլիճների և այլ շինությունների ցանկը համապետական ընտրությունները նշանակվելուց ոչ ուշ, քան 20 օր հետո, համայնքի

ղեկավարի կողմից կտրամադրվի ԿՀՀ-ին, և այն կտեղադրվի կայքում:

Դիտորդների հավատարմագրման կարգը որոշակի տեխնիկական վերանայման է ենթարկվում, ամրագրվում է նրանց գեկույցների՝ կայքում տեղադրման մասին դրույթ:

Վերանայվում է վստահված անձանց առաջադրվող արգելքների շրջանակը. այդպիսիք չեն կարող լինել նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, դիտորդները, թեկնածուները:

Հստակեցվում են ԿՀՀ,

ՏարՀՀ անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում ընտրական հանձնաժողովների համալրման ժամկետներն ու ընթացակարգերը:

Համապետական ընտրությունների դեպքում ԿՀՀ-ի կողմից ուսումնական ձեռնարկներ կիրառարակվեն վստահված անձանց, դիտորդների համար:

Տեղամասերին տրամադրվող լրացուցիչ քվեաթերթիկների նվազագույն քանակ է ամրագրվում՝ 2-ից ոչ պակաս:

Հստակ սահմանվում է թեկնածուների գրանցումն ուժը կորցնելու դեպքերի և այդպիսի որոշում ընդունողների (ԿՀՀ, դատարան) շրջանակը:

- 2015 թվականին մեր հանրապետությունում կանցկացվեն խորհրդարանական ընտրություններ: Ի՞նչ փոփոխություններ են սպասվում ԱԺ ընտրություններում:

- Համամասնական ցուցակներում ընդգրկվելիք թեկնածուների նվազագույն (5) և առավելագույն (համամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվի եռապատիկը) թվեր են նախատեսվում: Նվազագույն թիվ սահմանելու միջոցով նվազեցվում է այն ռիսկը, որ կոնկրետ ցուցակով հանդես եկող ուժը կարող է ցուցակում առկա թեկնածուների թվից ավելի մեծ թվով մանդատներ ստանալ կամ չկարողանալ լրացնել ազատ մանդատներն ԱԺ պաշտոնավարման ժամկետի ընթացքում: Առավելագույն սահմանաչափ կիրառվում է՝ ելնելով գուտ գործնական նկատառումներից:

Ընդլայնվում է ԱԺ պատգամավորի թեկնածու առաջադրվելու սահմանափակումների դեպքերի շրջանակը. թեկնածու չեն կարող առաջադրվել նաև դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները:

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը մերժելու հիմքերն ավելի են ընդլայնվում. դրանք են՝ կուսակցության լուծարումը, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների թվի նվազումը 2-ից, կուսակցության գործունեության կասեցումը կամ արգելումը:

Բացի այդ, ԱԺ պատգամավորի ընտրության արդյունքներով ընդունվող որոշումների շրջանակն է ընդլայնվում: Համամասնական ընտրակարգի դեպքում՝ ԿՀՀ որոշմամբ, մեծամասնականի, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրության դեպքում՝

ՏարԸՀ որոշմամբ, կարող է առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին որոշում ընդունվել, եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցել օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, և եթե վերաքվեարկության միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Իսկ եթե հնարավոր չէ շտկել, ապա ԱԺ ընտրություններն անվավեր են ճանաչվում և նշանակվում է ԱԺ ընտրությունների վերաքվեարկություն: Վերջինիս արդյունքները ևս անվավեր ճանաչվելու դեպքում անցկացվում է նոր ընտրություն:

- Իսկ Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասով:

- Համայնքի ավագանու թվակազմի սահմանման հիմքում համայնքի ընտրողների թիվն է՝ գործող օրենսգրքում ամրագրված բնակչության թվի փոխարեն: Օրինագծի ընդունման դեպքում 3 տոկոսով կկրճատվի հանրապետությունում ընտրվող ավագանու անդամների թիվը:

Նոր օրինագծով համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրվելու սահմանափակումների շրջանակն է ընդլայնվում. թեկնածու չեն կարող առաջադրվել նաև քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները:

- Այսպես թե այնպես՝ համարենք, որ նոր ընտրական օրենսգիրքն արդեն ընդունված է: Ի՞նչ ակնկալիքներ ունեք, ի՞նչ կտա այն հանրությանը:

- Նոր ընտրական օրենսգրքի ընդունումը կստեղծի առավել կազմակերպված ու հրապարակային ընտրություններ ապահովելու նախադրյալներ: Սակայն, որ առավել կարևոր է, այդ օրենսգրքի ընդունումից բացի ժողովրդավարական ընտրությունների անցկացման ճանապարհին հիմնական մարտահրավեր կշարունակվեն դիտվել դրա բարեխիղճ իրագործումն ու գործընթացի բոլոր մասնակիցների կողմից քաղաքական կամքի դրսևորումը:

Օրինագծի ընդունումից հետո ԼՂՀ ԿԸՀ-ի կողմից մեկամսյա ժամկետում պետք է ընդունվեն վեց տասնյակից ավելի նորմատիվ որոշումներ: Այդ ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվում:

Լատուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ